

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

*Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ*

kkostikyan@yahoo.com

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԵՊՀ Արաբագիտության ամբիոն

**ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵԻ ՈՒ ԱԼԻ ԻԲՆ ԱԲՈՒ ԹԱԼԻԲ
ԽԱԼԻՖԱՅԻ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ
ԴԱՇՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

Մահմեդական տիրապետության տակ ապրող հայության կրոնա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավունքների հիմքում դարեր շարունակ գտնվել է իսլամական երկրներում զիմմիներին տրված կարգավիճակը, որն իր հերթին ձևավորվել է դեռևս Մուհամմադ մարգարեի ու նրան հաջորդած չորս արդարադատ խալիֆաների կողմից նվաճվող քրիստոնյա համայնքների հետ կնքված դաշնագրերի հիման վրա:

Արաբական նվաճումների ընթացքում այլադավան ժողովուրդներին կամ նրանց առանձին հատվածներին տրվում էին դաշնագրեր (կամ պայմանագրեր), որոնցում արձանագրվում էր նրանց հպատակեցումը արաբական տիրապետությանը ու նաև որոշվում նրանց հետագա կարգավիճակն ու իրավունքները մահմեդական իշխանության պայմաններում: Նման պայմանագրեր տրվել էին Մուհամմադ մարգարեի կողմից հիջրայի 5 թ. Մակնայի հրեաներին, Նաջրանի քրիստոնյաներին, Սալման Փարսիի զրադաշտականներին¹: Հայ պատմագրության մեջ հիշատակվում է «մարգարեի դաշնագիրը»՝ տրված 630-ականների սկզբին կամ ավելի վաղ Մեքքա այցելած Երուսաղեմի քրիստոնեական պատվիրակությունը գլխավորող հայոց Աբրահամ պատրիարքին²: Հիշյալ դաշնագրերից շատերը հետագայում հաստատվում են Աբու Բաքր, Օմար և Ալի արդարադատ խալիֆաների կողմից³: Երուսաղեմի հայոց պատրիարքին տրված հիշյալ դաշնագիրը, որը հայոց պատմագրության մեջ հայտնի է «Ալի Մանշուր» անվամբ, հաստատվել է Ալի և Օմար խալիֆաների

نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق و گردآوری دکتر سید محمد حسینی، تهران، 1377، ص 165-169، 228-240، 623

² Մաւալանեանց Տ., հ. Ա., 1931, 261:

³ Նույն տեղում, 241, 248:

կողմից⁴, որը հետագոտողների կարծիքով գուրկ չէ պատմական հիմքից⁵: Հայ-արաբական առնչությունները և արաբական նվաճումները հայկական տարածքներում նշանավորվում են Օսման խալիֆայի օրոք (644–656 թթ.) Սիրիայի կառավարիչ Մու'ավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև 652 թ. կնքված, նաև Մուհամմադ իբն Մրվանի կողմից Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի խնդրանքով 703 թ. տրված դաշնագրերով⁶, որոնց մասին հիշատակում են ինչպես արաբ, այնպես էլ հայ պատմիչները⁷: Արաբ մատենագիրներից մի քանիսի (Բալագուրին, Թաբարի) երկերից հայտնի է Օմար խալիֆայի օրոք Արմինիայի Դվին, Բարազ⁸(?) և այլ քաղաքների հայ բնակչության հետ կնքված պայմանագրերի բովանդակությունը:

Մուհամմադ Մարգարեի ու առաջին արդարադատ խալիֆաների առնից նվաճվող քաղաքների այլադավան բնակչության հետ կնքվող պայմանագրերը մեծ թիվ են կազմել և կարևոր դեր խաղացել իսլամական տիրապետության տակ անցած ժողովուրդների կյանքում: Նրանցում որոշակի պայմաններով ամրագրվել են այդ ժողովուրդների կրոնական ազատությունները, կարգավորվել նրանց սոցիալ-տնտեսական դրության հարցերը: Այս կապակցությամբ տեղին է նշել նաև, որ որոշ հետագոտողների ոչ անհիմն կարծիքով այդ դաշնագրերից շատերը ստեղծվել են հենց իրենց՝ զիմմիների կողմից, քանի որ դրանց կարիքն առավելապես ունեին նրանք, մասնավորապես նաև հայերը, որոնց իրավունքները դրանք պաշտպանում էին⁹: Այս իսկ պատճառով պատահական չէ նաև այն, որ այդ պայմանագրերը խնամքով պահպանվել ու ժամանակ առ ժամանակ նորացվել են այդ համայնքների կողմից՝ հարմարեցվելով նոր պայմաններին: Արդյունքում այս փաստաթղթերի բազմաթիվ օրինակների առկայությունն է աշխարհի տարբեր ձեռագրական հավաքածուներում: Մուհամմադ մարգարեի ու վաղ իսլամի փաստաթղթերի ժողովածուի հեղինակ Մուհամմադ Համիդալլահը Սիրիայում, Եգիպտոսում, Իրաքում և Հնդկաստանում կատարած իր ճանապարհորդությունների ընթացքում, նաև Փարիզի, Լոնդոնի, Հռոմի, Լեյդենի և այլ գրադարաններում հանդիպել է

⁴ Սաւալանեանց Տ., 264:

⁵ Մկրտումյան Գ., 2010, 54:

⁶ Seta B. Dadoyan, v. I, 2011, 57.

⁷ Արաբական աղբյուրներ, 2005, 270–271: Մամուել Անեցի, 2011, 100, Գևորգ, 1982, 35: Տե՛ս հայ պատմիչների հաղորդումների հիման վրա այդ խնդրին անդրադարձը Բ. Եպս. Կիլիկեական, 1930, 122:

⁸ Այդ դաշնագրերի տեքստերն ընդգրկված են վաղ իսլամի շրջանի փաստաթղթերի ժողովածուի մեջ (نامه ها و پيمانهای سياسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقيق و گردآوری دکتر سيد محمد حسيني، تهران، 1377، ص 515-520):

⁹ Seta B. Dadoyan, v. I, 2011, 59.

քրիստոնյաների հետ կնքված պայմանագրերի բազմաթիվ օրինակների, որոնց մի մասը տրված էին Մուհամմադ մարգարեի, մի մասը՝ առաջին արդարադատ խալիֆաների անունից¹⁰։ Այս դաշնագրերի օրինակները քիչ չեն նաև Իրանի գրադարաններում, ինչպես նաև Երևանի Մատենադարանում։

Արաբ նվաճողների և այլադավան ժողովուրդների հետ կնքված դաշնագրերը նախապես բնականաբար գրված են եղել արաբերեն, որը Արաբական խալիֆայության պետական լեզուն էր։ Այս դաշնագրերի նախնական տարբերակները, որոնք պահպանվել են արաբ պատմիչների երկերում, հիմնականում հակիրճ են։ Դաշնագրերից շատերը պահպանվել են նաև իրենց պարսկերեն թարգմանական տարբերակներով։ Դաշնագրերի երկլեզվյա (արաբերեն ու տոդատակում պարսկերեն) և միայն պարսկերեն թարգմանական տարբերակները ստեղծվել են ինչպես Իրանում, այնպես էլ Օսմանյան կայսրության տարածքում։ Պարսկերեն տարբերակները առատությունը պայմանավորված է XI–XIX դարերում Արևելքում այդ լեզվի խաղացած պատմամշակութային կարևոր դերով։ XI դարի վերջին Նոր պարսկերեն լեզուն ոչ միայն լիովին ձևավորվում է որպես գրականության, կառավարման ու գրագրության լեզու, այլև դառնում «խալամական լեզու»՝ իր մեջ ներառելով մեծ թվով փոխառություններ արաբերենից։ Այս հանգամանքով պայմանավորված պարսկերենի կիրառության սահմանները ընդլայնվում են՝ ընդգրկելով արևմուտքում Ռումի Սելջուկյան սուլթանության և արևելքում Հյուսիսային Հնդկաստանի շրջանները¹¹։ Մահմեդական տիրապետության տակ ապրող հայության համար զգալի կարևորություն ունեցող այս փաստաթղթերը թարգմանվել են նաև հայերեն և մեզ հասել հայերեն տարբերակներով ևս։

Մեր ձեռքի տակ եղած տարալեզու տարբերակների համեմատությունը միմյանց և պահպանված արաբերեն օրինակների հետ ցույց է տալիս, որ դրանք հիմնականում հանդիսանում են երկու տարբեր արաբերեն բնագրերի թարգմանական տարբերակները և իրենց բովանդակային առանձնահատկություններով նույնանում են նրանց հետ։

Դարեր շարունակ մահմեդական տիրապետության տակ ապրող հայության իրավունքների պաշտպանության համար շրջանառվող դաշնագրերի մի խմբի մեջ կարելի է առանձնացնել Մատենադարանի արաբատառ ֆոնդի երկու փաստաթղթեր, որոնցից մեկը երկլեզվյա է՝ արաբերեն, պարսկերեն (ձեռ. 358, ընդօրինակված հավանաբար XVII դարում), մյուսը՝ պարսկերեն (ձեռ. 272, ընդօրինակված 1879 թ.)։ Նույն բովանդակությամբ դաշնագրի մի համառոտ տարբերակ, որը հաստատված է Ուռհայի դագիներ Նադի Ֆեզլիզադեի

¹⁰ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص. 165. 626-29. Նույն տեղում, էջ 626-29. 165. Այս մասին մանրամասն տես նաև Գ. Մկրտումյան, 2013, 97–103։

¹¹ Ludwig Paul, Encyclopaedia Iranica.

ու Մոլլա Չելեբիի կնիքներով, հրատարակվել է Էրզրումի Համալսարանի Իսլամագիտության ֆակուլտետի պատմական բաժնում հայտնաբերված մի փաստաթղթի հիման վրա տողատակում թուրքերեն թարգմանությամբ¹²: Բովանդակային առանձնահատկություններից ելնելով այս խմբի մեջ կարելի է ներառել նաև Գրիգորիս Աղթամարցու նախաձեռնությամբ 1583 թ. Ոստանի Կարախան Բեկի կողմից հաստատված Մուհամմադ մարգարեին վերագրված պարսկերեն պայմանագիրը, որն ուսումնասիրել ու հրատարակել է Հ. Փափագյանը «Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները» շարքի Ա պրակում¹³:

Այս խմբին են պատկանում մեզ հայտնի մի քանի ուշ միջնադարյան հայերեն թարգմանական տարբերակները ևս¹⁴: Վերջիններս թեև իրենց բառային ձևակերպումներով տարբերվում են, սակայն ունեն բովանդակային ընդհանրություն թե՛ միմյանց և թե՛ արաբատառ օրինակների հետ¹⁵: Հայերեն թարգմանական տարբերակներից մեկը (ձեռ. 2622) ընդօրինակվել է 1851 թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում, ընդ որում թարգմանվել է պարսկերեն բնագրից, որը պահվում է հիշյալ վանքում¹⁶: Հարմարեցվելով Իրանի շիական պետության սահմաններում շրջանառության պայմաններին՝ նրա վերնագրային հատվածում նշվում է՝ «Թարգմանութիւն ի պարսից լեզուէ Մեծ Մանշուր ասացեալ դաշնագրոյ: Դաշնագիր Մեհեմմետի, որ ի քրիստոնեայս, գրեալ ձեռամբ Ալիի»¹⁷: Այսինքն դաշնագրի կնքումը վերագրվել է շիաների առաջնորդ Իմամ Ալիին, որի անվան հետ կապելը օգտակար էր շիական պետության տարածքում բնակվող հայերի համար: Նույն բնագրի մեկ այլ հայերեն թարգմանություն հրատարակել է Նոր Ջուղայի պատմության հեղինակ Հ. Տեր-Հովհաննյանը, որի մոտ սակայն Իմամ Ալիի մասին խոսք չկա: Փոխարենը փաստաթղթի վավերականությունը, ըստ վերջում առկա նշումի, հաստատված է շիաների վեցերորդ իմամ Ջա'ֆար Սադեդի կողմից¹⁸, որը իմամներից ամենահեղինակավորն էր և մեծ դեր ուներ շիական ուսմունքի ու իրավագիտության ձևավորման մեջ: Ինչպես տեսնում ենք, այս տարբերակում ևս

¹² نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 630-631

¹³ Փափագյան Հ., հ. Ա, 1956, վավ. 21:

¹⁴ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, 2826, 2968:

¹⁵ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 115ա-116բ, ձեռ. 2826, էջ 243ա-244բ:

¹⁶ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 116բ, տե՛ս նաև Մայր Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, Երևան, 2013, էջ 760:

¹⁷ Մ. Մատենադարան, ձեռ. 2622, էջ 115ա:

¹⁸ Տեր-Յովհաննէանց Յ., հ. Բ, 1881, 153: Իմամ Ջա'ֆարի անվան հետ էր կապվում նաև շիական պետության տարածքում գործող հայերի համար ոչ նպաստավոր մի օրենք, որի մասին ստորև կ'իխոսվի: Իմամ Ջա'ֆարի անվան հետ հիշյալ փաստաթուղթը կապվել է հավանաբար նշված օրենքին հակադրելու նպատակով:

Ամենայն հավանականությամբ²⁰ այս խմբի դաշնագրի մի օրինակի հիման վրա է ԺԲ դարում Սամուել Անեցին նշում, որ Մուհամմադ մարգարեն «անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ հայոց աշխարհիս համարձակ ունել զքրիստոնէութիւնն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա յամենայն տանէ առեալ Դ (4) դրամ և Գ (3) մոթ խորբալ (հացահատիկ) և ձիատուպրակ մի և պարան մի մագէ և ձեռնարար մի...»²¹:

- Նշվում է, որ դաշնագրերը տրված են Մուհամմադ մարգարեի անունից,
- «Հայ» բառի փոխարեն օգտագործվում է «քրիստոնյա» բառը անգամ հայերեն տարբերակներում²²,
- Դաշնագրով պարտադրվում է մահմեդականներին պաշտպանել քրիստոնյաներին և օգնել նրանց հարկ եղած դեպքում, մասնավորապես եկեղեցիների վերանորոգման, դրամական անհրաժեշտության և այլ հարցերում,

²⁰ Այս մասը համեմատի՛ր վերը նշված 1583թ. դաշնագրի համապատասխան մասի հետ. «...1 մող ու կես հացահատիկ, 1 ձիան տոպրակ և 1 պարան» (**Փափագյան Հ.,** պրակ Ա, 71) (Ենթադրությունը Զ. Կոստիկյանի):

²² Այս հարցում բացառություն են կազմում Օսմանյան պետության տարածքում շրջանառվող երկու բավականին ձևափոխված տարբերակները: Մեկը վերը նշված Օսմանյան Թուրքիայում տպագրված տարբերակն է (*نامہ ہا و پیمائہای سیاسی حضرت محمد و اسناد*) և 631-630, 1377, *تهران*, *صدر اسلام*, *تحقیق و گردآوری دکتر سید محمد حسینی*, *۱۳۷۷*) 2. Փափագյանի կողմից հրատարակված փաստաթուղթը, որտեղ ոչ միայն շեշտվում է նրա հայերին տրված լինելը, այլև նշվում է Սահակ Չորսփորեցի կաթողիկոսի անունը, Աղթամարի հայոց վանքը իրեն ենթակա թեմական շրջաններով (**Փափագյան Հ.,** *հ. Ա, 69-71*):

- Արգելվում է քրիստոնյաներին բռնի մահմեդականացնելը, նրանց բնակության վայրերը փոխելը, պաշտամունքի վայրերը ոչնչացնելը կամ տեղափոխելը, քրիստոնեական օրենքներով ապրելուն և կրոնական արարողությունները կատարելուն խոչընդոտելը,
- Արգելվում է քրիստոնյա կանանց հետ բռնի ամուսնությունը, և վերջիններիս կամավոր ամուսնության դեպքում՝ նրանց մահմեդականություն պարտադրելը,
- Նշվում է գանձվող ջիզյայի չափը՝ (միջին կարողության տեր չափահաս տղամարդկանցից) 4 և (հարուստներից) 12 (դինար, դիրհեմ, նաև աղջն) չափով²³,
- Վավերագրերի վերջում որպես կանոն նշվում են մի շարք վկաների՝ արդարադատ խալիֆաների, արաբ գորավարների ու Արաբական խալիֆայության վաղ շրջանի այլ պատմական նշանավոր անձանց (շուրջ 25-30 հոգու) անուններ:

Հիշյալ խմբի դաշնագրերը թեև տարբերվում են այլ զիմմիների (հրեաների, գրադաշտականների) հետ կնքված դաշնագրերից²⁴, այնուամենայնիվ բովանդակային հիմնական հատկանիշներով, բառային ձևակերպումներով և գանձվող ջիզյայի չափով կապվում են Մուհամմադ մարգարեի և Եգիպտոսի Թուր վանքի²⁵, նաև Նաջրանի քրիստոնյաների միջև կնքված պայմանագրերի օրինակների հետ: Նաջրանի քրիստոնյաների հետ կնքված պայմանագիրն ընդգրկված է Թ և ԺԱ դարերի միջև ընկած ժամանակահատվածում գրված Նեստորականների պատմության մեջ²⁶, իսկ Եգիպտոսի Թուր վանքի քրիս-

²³ Ջիզյան այլադավանների կողմից մահմեդականներին վճարվող գլխահարկի անվանումն էր և ամենայն հավանականությամբ ծագում էր պահլավերեն «gazītak» բառից, որը Սասանյան Պարսկաստանում ցածր խավից գանձվող հարկի անվանումն էր: Տեսականորեն ջիզյա պետք է վճարեին ազատ չափահաս տղամարդիկ (այդ հարկից ազատված էին կանայք, ծերերը, երեխաները, ստրուկները, մուրացկաններն ու հաշմանդամները): Մահմեդականացածներն ազատվում էին ջիզյայից, և սա նպաստում է իսլամի արագ տարածմանը: Այնուամենայնիվ մասսայական հավատափոխությունը լրջորեն պակասեցնում էր պետական գանձարանի եկամուտները, այնպես որ VII դարի վերջին VIII դարի սկզբին նոր մահմեդականացածները (մավալիները) նույնպես պարտավոր էին հարկ վճարել (**Vera B. Moreen**, Jizya, vol. XIV, Fasc. 6, 643–645, ինտերնետային կայքէջ. <http://www.iranicaonline.org/articles/jezya>):

²⁴ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، محمد حسینی، ص 623 – 9

²⁵ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 632 – 634

²⁶ Histoire Nestorienne (Chronique de Seert), vol. 13, 1918, 610–617. Այդ մասին մանրամասն տե՛ս նաև Մկրտումյան Գ., 2007, 106–112:

տոնյաների միջև կնքված դաշնագրի օրինակները պահպանվել են ավելի ուշ շրջանի աղբյուրներում²⁷:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նշված խմբի դաշնագրերի մեզ հայտնի տարբերակները կարելի է թվագրել Ժ–ԺԹ դարերով, և նրանք շրջանավորվում էին մահմեդական տիրապետության տակ ապրող ոչ միայն հայ, այլև քրիստոնյա այլ համայնքների շրջանում:

Հարկ է նշել, որ այս խմբի փաստաթղթերի մի մասում նշվող ջիզյայի գումարը (դինարով կամ դիրհեմով) շփոթմունքի առարկա է դարձել: Ձեռագիր 358-ում այն նշված է «4 դինար», ապա ջնջված և ուղղված է «4 դիրհեմ», իսկ հարուստներից գանձվող գումարը նշվում է 12 «դիրհեմ»՝ արաբերեն մասում, իսկ պարսկերեն թարգմանական տողատակում՝ նույն չափը «դինարով»: 1879 թ. Թավրիզում ընդօրինակված ձեռագիր պարսկերեն տարբերակում ջիզյայի չափը նշվում է 4 «դինար» և ապա 12 «դիրհեմ»²⁸: Նոր Ջուղայում թարգմանված հայերեն թե՛ ձեռագիր և թե՛ տպագիր տարբերակներում ևս այն նշվում է «4 դինար» և «12 դրամ» ձևով²⁹, իսկ մյուս երկու ձեռագրերում, որոնք իրենց բնագրերով գրեթե նույնական են, «4 դինարը» բաց է թողնված և նշվում է միայն վաճառականներից ու հարուստներից գանձվող ջիզյայի չափը՝ «12 դրամ արծաթ»³⁰: Մուհամմադ Համիդալլահի կողմից հրատարակված ժողովածուի մեջ հայ զինմիների կողմից վճարվող ամենամյա ջիզյան սահմանվում է 4 դիրհեմի և մեկ հերաթյան հագուստի չափով³¹: Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրում գանձվող ջիզյայի չափը նշվում է 4 դիրհեմ կամ Եմենական կտորի տեսակ, հարուստներից՝ 12 դիրհեմ³², իսկ Եգիպտոսի Թուր վանքի քրիստոնյաների հետ կնքված պայմանագրում նշվում է միայն հարուստներից գանձվող 12 դիրհեմը³³: Ինչպես վերը նշել ենք, «4 դրամ» չափով է ջիզյան նաև Սամուել Անեցու մոտ: Ոստանի կառավարիչ Կարախանի կողմից 1583 թ. հաստատված դաշնագրով սահմանվում էր ջիզյայի չափը յուրաքանչյուր չափահաս տղամարդուց՝ 4 աղչե՝ 1 միսղալ³⁴ մաքուր արծաթ³⁵:

²⁷ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 635 – 632

²⁸ Մատենադարան, արաբատառ ձեռ. 272:

²⁹ Մատենադարան, ձեռ. 2622, 115ա, **Տէր-Յովհաննէանց**, h. Բ, 149:

³⁰ Մատենադարան, ձեռ. 2968, էջ 235ա, ձեռ. 2826, 243բ:

³¹ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 631

³² Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, 1918, 612.

³³ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 633

³⁴ Աղչեն (أقچه) (թուրք.) – Արծաթ դրամի միավոր: 4 աղչեն կշռել է 1 միսղալ (մոտ 4,5 գրամ) և հետևաբար մեկ աղչեն կշռում էր մոտավորապես 1.10 գրամ (Հ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, h. Ա, էջ 104):

³⁵ Փափագյան Հ., h. Ա, 69:

Թե՛ դիրհեմը և թե՛ դինարը հնագույն դրամական միավորներ են (առաջինը³⁶ արծաթի, երկրորդը՝ ոսկու³⁷), որոնք շրջանառության մեջ են գտնվել Արևելքում դեռ նախախալամական շրջանից:

Փաստենք, որ Մուհամմադ մարգարեի օրոք գլխահարկի կոնկրետ չափը դեռևս որոշված չէր, հարկերի գանձման մեխանիզմը մուսուլմանական տիրապետության տակ գտնվող հպատակ ժողովուրդներից սահմանվել է ավելի ուշ: Չիմնիների կողմից վճարվող ջիզայի չափը տարբեր ժամանակներում և տարբեր շրջաններում նույնը չի եղել՝ կախված լինելով վայրի տնտեսական պայմաններից և հարկատուների սոցիալական դրությունից: Աբբասյան խալիֆայության շրջանում ջիզան, կախված զիմմիի ունեցվածքի չափից, գանձվում էր 1, 2, 4 դինարի չափով, որը համապատասխանում է 12, 24 և 48 դիրհեմի³⁸: Քանի որ այս խմբի դաշնագրերի հնագույն տարբերակներում (Նեստորականների պատմության մեջ ու Սամուել Անեցու երկում) նշվում են դիրհեմով տարբերակները, ուստի պետք է ենթադրել որ բնագրին ավելի մոտ են դրանք:

Փաստորեն հիշյալ վավերագրերի ու ձեռագրային ընդօրինակությունների ստեղծման շրջանում (Ժ-ԺԹ դարեր) թե՛ դրամական միավորները և թե՛ գանձվող ջիզայի չափը զգալի փոփոխություններ էին կրել, որտեղից էլ հա-

³⁶ Դիրհեմը (հուն. *drakhmē*՝ «drachma»; միջ. պարսկ. *drahm*, պարսկ. *derham*) արծաթ դրամական միավորն էր, որը շրջանառության մեջ է եղել դեռ Աքեմենյան ժամանակաշրջանից՝ պահպանելով իր կշիռը 4 գրամ չափով ողջ նախախալամական շրջանում: Նրա կշիռը վաղ խալիֆայության տարածքում 2.80 – 2.95 գրամ էր: Աբբասյան խալիֆայության սկզբից այն որոշ փոփոխություններ կրելով թե՛ իր արտաքին տեսքում և թե՛ կշռում՝ ի վերջո ալ-Մու՛թասիմ խալիֆայի իշխանության սկզբից ֆիքսվում է և այդ կերպ շարունակում շրջանառվել մինչև XI դար: Լենգ Թեմուրի նվաճումից հետո Իրանում իսպառ դուրս է գալիս շրջանառությունից և այլևս չի կիրառվում՝ փոխարինվելով շահի կամ ռիալ դրամներով (Philippe Gignoux, Michael Bates, Vol. VII, Fasc. 4, 424–428, տե՛ս կայքէջ <http://www.iranicaonline.org/articles/dirham>).

³⁷ Դինարը (նոր պարսկ. *dīnār*, միջ. պարսկ. *dēnār* < լատ. *denarius aureus*), ոսկի դրամն է: *Denarius* բառը գործածվում էր դեռ Հռոմի Հանրապետության շրջանից դրամի իմաստով: Իրանում այն սկսում է հատվել Մասանյան Արտաշիր Ա -ի օրոք և կշռում էր 7–7.4գ: Իսլամական ոսկի դինարները սկսել են հատվել սկսած 696 թվականից և կշռով հավասար էին 4.25 գրամի: Իսլամական ոսկե դինարներ սկսում են հատել սկսած 835 թվականից Մերվում, այնուհետև նաև Ահվազում, Մուհամմադիեում, Սամարղանդում, Կովկասի, Իրաքի ու Ատրպատականի քաղաքներում մինչև XIII դարը (Philippe Gignoux, Michael Bates, Vol. VII, Fasc. 4, 412–416 <http://www.iranicaonline.org/articles/dinar>): ԺԵ դարից դինարը խիստ արժեզրկվում է՝ վերածվելով արծաթի դրամի: ԺԷ դարում 200 դինարը, որ կոչվում էր մեկ աբասի, կշռում էր 7–9 գրամ մաքուր արծաթ (**Փափագյան Հ.**, պրակ Ա, 108:):

³⁸ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 100–101:

վանաբար ծագել են վերը նշված օրինակներում առկա անհամապատասխանություններն ու տարբերությունները: Ինչպես կտեսնենք ստորև դաշնագրերի մյուս խմբի օրինակների մեծ մասում ջիգայի չափը նշող մասն ընդհանրապես հանվել է:

Օսմանյան կայսրության տարածքում հայտնաբերված դաշնագրի հրատարակիչ Համիդալլահն այն կարծիքին է, որ այդ փաստաթուղթը ստեղծվել է քրիստոնյաների կողմից և հայերը որևէ կերպ չեն առնչվել Մուհամմադ մարգարեի հետ, որպեսզի կարողանային նրանից դաշնագիր ստանալ: Բացի այդ, նրա կարծիքով այդ դաշնագիրը միակողմանի է և պաշտպանում է միայն քրիստոնյաների շահերը: Նա թվարկում է փաստաթղթում նշվող մի շարք վկաների անուններ (Մուլավիա իբն Սուֆյան, Աբդալլահ իբն Աբբաս, Աբդալլահ իբն Ամրու իբն Աս և այլն), որոնք դաշնագրի կնքման ժամանակ չէին կարող հանդես գալ որպես վկաներ՝ ժամանակագրական անհամապատասխանությունների պատճառով³⁹:

Իրականում վերը նկարագրված դաշնագրերը կոմպիլատիվ բնույթի փաստաթղթեր են, որոնցում նշվող անձիք պատմական անձնավորություններ են և առնչություններ ունեն տարբեր դաշնագրերի ստեղծման հանգամանքների հետ: Մասնավորապես, Մուլավիա իբն Սուֆյանի անվան առկայությունը նրանցում ակնարկ է Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ Մուլավիա իբն Սուֆյանի միջև 652 թ. կնքված դաշնագրի մասին⁴⁰: Պատմական Հայաստանի տարածքում ապրող հայերը իրոք Մուհամմադ մարգարեի հետ որևէ առնչություն չեն ունեցել: Այս կապակցությամբ վերը նշված 1583 թ. վավերագիրն ուսումնասիրող Հ. Փափագյանը իրավացի կարծիք է հայտնել, որ իրականում իսլամի մարգարեի անվան հետ է նույնացվել Աբդ ալ-Մելիք ամիրայի կողմից 703 թ. Հայաստան արշավող Մուհամմադ գորավարի անունը⁴¹: Վերջինիս ընդառաջ դուրս է եկել Սահակ Չորափորեցի կաթողիկոսը, որի խնդրանքով էլ դաշնագիրը կնքվել է⁴²: Այս միտքը հաստատում է նաև այն հանգամանքը, որ 1583 թ. դաշնագրում նշվում է, որ այն տրվել է Սահակ Չորափորեցի կաթողիկոսի խնդրանքով⁴³: Իսկ այն, որ Մուհամմադ գորավարը ևս կարող էր կնքած լինել նման դաշնագիր, չի կարելի բացառել, քանի որ պահպանվել են բազմաթիվ դաշնագրեր կնքված արաբ գորավարներ Խալեդի, Նա՛մանի, Հազիֆա իբն Յամանի⁴⁴ կողմից: Փաստաթղթերի ուշ շրջանում

³⁹ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 631.

⁴⁰ Պատմություն Սեբեոսի, 1979, 169:

⁴¹ Փափագյան Հ., պրակ Ա, 99:

⁴² Ղևոնդ, 1982, 35:

⁴³ Փափագյան Հ., պրակ Ա, 70:

⁴⁴ نامه ها و پیمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 505, 504, 449, 446.

ստեղծված լինելու հանգամանքով կարելի է բացատրել տարբեր միմյանց ոչ ժամանակակից անձանց անունների հիշատակումը վկաների շարքում:

Այսպիսով, տվյալ դեպքում գործ ունենք պատմական հենքի վրա կառուցված միևնույն մեզ անհայտ արաբերեն բնագրի ուշ շրջանի (Թ—ԺԹ դարերի) ընդօրինակությունների և թարգմանական տարբերակների հետ: Եվ փաստորեն այդ փաստաթղթերը տեքստային աննշան տարբերություններով շրջանառվել են մահմեդական տիրապետության տակ ապրող ոչ միայն հայերի, այլև քրիստոնյա մյուս դավանանքներին պատկանող ժողովուրդների շրջանում դարեր շարունակ՝ փոփոխվելով ու հարմարեցվելով ժամանակի և միջավայրի պահանջներին, որպեսզի ավելի արդյունավետ կերպով պաշտպանեն նրանց իրավունքները մահմեդական հարևանների ու իշխանությունների ոտնձգություններից:

Առավել մեծաքանակ խումբ են կազմում չորրորդ արդարադատ խալիֆա (Իմամ) Ալի իբն Աբու Թալեբի անունից տրված դաշնագրի օրինակները, որոնց հիմքում ևս ուրվագծվում է հնագույն արաբերեն տարբերակի առկայությունը: Այս խմբի դաշնագրերից են Մատենադարանի արաբատառ ֆոնդում որպես ձեռագիր հ. 357 գրանցված 1694 թ. փաստաթուղթը և 1767 թ. Աստրախանում ընդօրինակված պարսկերեն վավերագրերը, որոնցից երեքի վրա գրված է, որ ընդօրինակվել են Պետերբուրգում պահվող պատճենից⁴⁵: Գրեթե նույն բովանդակությամբ դաշնագրի մեկ այլ ընդօրինակություն պահվում է Թեհրանում, Պառլամենտի գրադարանի մի պարսկերեն ձեռագիր ժողովածուի մեջ, որը գրվել է XIX դարում⁴⁶: Իմամ Ալիի անունից կնքված այս խմբի դաշնագրերի երկու օրինակի մասին էլ նշում է Լ. Մինասյանը, ըստ որի դրանցից մեկը պահվում է Սպահանի պետական թանգարանի Չեհելսոթուն պալատում հ. 98-ի տակ, մյուսը՝ Նոր Ջուղայում⁴⁷: Նոր Ջուղայի փաստաթուղթը ևս բնօրինակը չէ, և նրա հատվածային ֆոտոպատճենում երևում է, որ այն նոտարական կնիքով հաստատված պատճենն է՝ «պատճենը համապատասխանում է իսկականին» նշումներով⁴⁸: Սպահանի Չեհելսոթուն պալատում պահվող Իմամ Ալիի կողմից տրված երկլեզվյա (արաբերեն և պարսկերեն) դաշնագիրը 1909 թ. տպագրվել է Թեհրանում: Այն ունի առաջաբան, որտեղ նշվում է, որ տպագրվել է Սեֆյան ժամանակաշրջանից մեզ հասած

⁴⁵ Մատենադարան, Ձեռագրատանից ստացված նյութեր, թղթ., 80գ, վավ. 38, էջեր 5–4, 16բ:

⁴⁶ Իրանի պառլամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ–6ա:

⁴⁷ **Մինասյան Լ.Գ.**, Երկու հրովարտակ Մահամմադ մարգարեից և Ալի ամիրապետից, 1363 (1985), 1–2:

⁴⁸ Նույն տեղում, 15:

քուֆի գրչությամբ գրված մի փաստաթղթի հիման վրա, որը պահվում էր Սպահանի Չեհելսոթուն պալատում⁴⁹:

Վերը նշված փաստաթղթերի և տպագիր տարբերակի արաբերեն բնագրի տեքստաբանական համեմատությունից պարզ է դառնում, որ պարսկերեն տարբերակները հանդիսանում են միևնույն արաբերեն փաստաթղթի տարբեր թարգմանական օրինակները և ստեղծվել են նրա հիման վրա՝ կամայականորեն բաց թողնելով նրա որոշ հատվածներ, այդ թվում նաև ջիզյայի չափը նշող մասը:

Հիշյալ խմբի բովանդակային առանձնահատկություններից է այն, որ կնքվել է Էմամ Ալիի հանձնարարությամբ հիջրայի 40 թվականի սաֆար ամսին Հիշամ իբն Ութբա Վադդասի կողմից 40 հոգուց բաղկացած քրիստոնյա (կամ հայ) հոգևորականների հետ (հիշատակվում են Հակոբ (Ակոբ), Աբրահամ (Իբրահիմ), Եսայի (Իսա) անունները): Վերը նշված Հիշամ իբն Ութբա իբն Աբի Վադդասը եղել է Ալիի զորավարներից, որը մասնակցել է 636 թ. տեղի ունեցած Յարմուքի ճակատամարտին և այնուհետև Երուսաղեմի նվաճմանը, իսկ Աբրահամը հայ պատմագրության մեջ հիշատակվում է որպես 630-ականներին «մարգարեի դաշնագիրը» կնքած Երուսաղեմի քրիստոնեական պատվիրակությունը գլխավորող հայոց պատրիարքը⁵⁰:

Չնայած որ տպագրված վավերագրի արաբերեն տարբերակում «հայ» բառը չի նշվում, նրա փոխարեն մի քանի անգամ նշվում է «քրիստոնյաներ» (نصارى) բառը⁵¹, սակայն տողատակում պարսկերեն թարգմանության մեջ փոխարենը նշվում է «հայեր» բառը: «Հայեր» բառն է նշվում նաև մյուս պարսկերեն թարգմանական տարբերակներում⁵²:

1909 թ. տպագրված պայմանագրում նշվում է վճարվող ջիզյայի չափը՝ «33 դիրհեմ արծաթ» ձևով⁵³, որն առավել մոտ է Աբբասյան խալիֆայության շրջանում զանձվող ջիզյայի չափին, որը կազմում էր 12, 24 և 48 դիրհեմ⁵⁴: Կարծում ենք հենց այս պատճառով հետագա տարբերակներում, չհամապատասխանելով ժամանակի իրողություններին և մասնավորապես զանձվող ջիզյայի չափին, վավերագրերի այդ հատվածը բաց է թողնվել:

Այս խմբի դաշնագրերը ևս իրենց բովանդակային առանձնահատկություններով և անգամ բառային ձևակերպումներով նույնական են Մուհամ-

⁴⁹ عهدنامه محمد پیغمبر، تهران، 1327، ص. 2-3.

⁵⁰ Սաւալանեանց S., h. Ա., Երուսաղեմ, տպ. Սրբոյ Յակոբեանց, 1931, 261:1

⁵¹ عهدنامه محمد پیغمبر، ص. 4, 5, 8.

⁵² Մատենադարան, ձեռ. 357, Ձեռագրատանից ստացված նյութերի ֆոնդ, թղթ. 80գ, վավ. 38; Իրանի Պաշտամենտի գրադարան, ձեռ. 8855, էջ 3բ:

⁵³ عهدنامه محمد پیغمبر، ص. 15.

⁵⁴ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 100–101:

մադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրի օրինակներից մեկի հետ⁵⁵:

Նաջրանի քրիստոնյաներին տրված դաշնագրի օրինակի մասին նրա հրատարակիչը նշում է հետևյալը. «Այս դաշնագիրը, որ Մուհամմադ մարգարեն տվել է Նաջրանի ու մյուս քրիստոնյաներին, ընդօրինակվել է Փիր Մաշայի (?) կողմից հիջրայի 260 թվականին (873/4 թ.) Հաբիր հոգևորականի մոտ եղած նմուշից, որն իր հերթին ընդօրինակվել է Բեյթ ալ-Հիքմայթի գրադարանում⁵⁶ պահվող կաշվի վրա գրված Մուհամմադ մարգարեի կնիքը կրող օրինակից»⁵⁷:

Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվում է անթվակիր արաբերեն մի փաստաթուղթ՝ գրված գոմեշի կաշվի վրա, որը բովանդակում է Իմամ Ալիի անունից քրիստոնյաներին տրված դաշնագրի մի մասը⁵⁸: Այն սկզբից թերի է և տեղ-տեղ այրվածքի հետևանքով անընթեռնելի: Այդուհանդերձ նրա առանձին հատվածների համեմատությունը մեր ձեռքի տակ եղած այլ դաշնագրերի հետ, հաստատում է բովանդակային նույնականությունը նրանց հետ, և այն հնագույն է այս խմբի մեզ հայտնի օրինակներից: Նաջրանի քրիստոնյաներին տրված դաշնագրի նախնական տարբերակի վերը նշված արտաքին հատկանիշները համապատասխանում են Մատենադարանի հնա-

⁵⁵ Գրեթե նույն անձնանուններն են նշվում Նաջրանի քրիստոնյաներին տրված պայմանագրում՝ «Մեիդ Աբդ Յաշու՛, Իբն Հաջարա, Իբրահիմ վանական և Իսա եպիսկոպոս»: Այս դաշնագրում հանդիպում են գրեթե նույն ձևակերպումները ինչ որ քրիստոնյաներին տրված խմբի դաշնագրերում. «Այս պայմանագիրը պետք է հաշվի առնեն մինչև այն ժամանակը, երբ ծովը կթրջի բուրդը, երկնքից անձևի կաթիլները կթափվեն, գետնին բույս կբուսնի, աստղերը երկնքում կփայլեն نامه ها و پيمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 234

عهدنامه محمد پیغمبر، ص. 6-7. Համեմատիր

⁵⁶ Բեյթ ալ-հիքմայթը بیت الحکمة կամ «Իմաստության տունը» իսլամի ոսկե դարի խոշոր մտավորական կենտրոնն էր, որ հիմնել էր խալիֆ Հարուն ալ-Ռաշիդը (իշխել է 786–809 թթ.) Բաղդադում և որն իր զարգացման գագաթնակետին է հասնում խալիֆ Մա՛մունի օրոք (813–833): Այս գիտական հաստատության մաս են կազմել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա ու հրեա ծագում ունեցող հետազոտողները: Բացի տարբեր լեզուներով գրքերի արաբերեն թարգմանումը, այստեղ աշխատողները հեղինակել են նաև մի շարք կարևոր գիտական գործեր: Այն ոչնչացվել է 1258թ. մոնղոլների կողմից Բաղդադի պաշարման ժամանակ:

⁵⁷ نامه ها و پيمانهای سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، ص 232

⁵⁸ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, ցուցակ 29, թղթ. 3, վավ. 130: Տե՛ս այդ մասին նաև Վ. Մակարյան, 2010, 170–172:

գույն փաստաթղթին: Ուստի չի բացառվում, որ վերջինս կարող է լինել Բեյթ ալ-Հիքմաթում պահվող օրինակի մասը կամ նրա պատճենը⁵⁹:

Այս խմբի դաշնագրերի վերոհիշյալ հատկանիշներն ու առանձնահատկությունները թույլ են տալիս եզրակացնել, որ տվյալ դեպքում ևս գործ ունենք ուշ շրջանում ստեղծված կոմպիլատիվ բնույթի փաստաթղթերի հետ, որոնք կրում են Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյաներին, Իմամ Ալիի կողմից Երուսաղեմի հայ հոգևորականներին տրված պայմանագրերի տարրերը և ինչպես երևում է, դրանք ևս շրջանառվել են ինչպես հայերի, այնպես էլ այլ քրիստոնյաների իրավունքների պաշտպանության նպատակով:

Մի կողմ դնելով դաշնագրերի վավերականության հարցը, որն ինչպես տեսնում ենք, վիճելի է բնօրինակների բացակայության պատճառով (մեզ հասած անգամ հնագույն տարբերակները Ժ դարից հետո ստեղծված կոմպիլատիվ բնույթի պատճեններ են), կցանկանայինք մի քանի խոսքով անդրադառնալ նրանց պատմական նշանակությանը:

Ոչ մահմեդականների իրավունքները իսլամական երկրներում ձևավորվում են՝ հենվելով հենց այս դաշնագրերի վրա: Այդ իրողությունն ակնհայտ է իսլամական իրավագիտության ակունքներում կանգնած Ալի իբն Հուսեյնի (կամ Իմամ Սաջջադի)⁶⁰ իսլամական երկրում ոչ մահմեդականների իրավունքների մասին արված ձևակերպումներում: Վերջինս, մասնավորապես, նշում է. «Նրանց [ոչ մահմեդականների] իրավունքն այն է, որ ընդունես այն, ինչ Աստված է ընդունել նրանցից, հավատարիմ լինես այն պայմանին, որ կնքվել է իսլամական պետության և նրանց միջև..., և քո անձի ու նրանց միջև պատենշ թող լինի Աստծո ուխտն ու հավատարմությունը Աստծո ու նրա մարգարեի հանձնարարությունների նկատմամբ: Քանզի մեծ մարգարեն պատվիրել է «Ես նրա թշնամին եմ լինելու, ով բռնություն կգործադրի իսլամական պետություններում ապրող այլ կրոնների հետևորդների նկատմամբ»⁶¹:

Ոչ մահմեդականների (գիմմի) կարգավիճակը, նրա հարկային պարտավորություններն ու իրավունքները հստակ ձևակերպում են ստանում իսլամական իրավագիտությանը առնչվող Աբու Յուսուֆի «Հարկերի մատյան» աշ-

⁵⁹ Կաթողիկոսական դիվանի նկարագրության մեջ նշված է, որ այն գնվել է Գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալիա Մանուկյանից: Նրա հայրը այն բերել է իր հետ Կարինից:

⁶⁰ Աբու Մուհամմադ Ալի իբն Հուսեյն ալ-Սաջջադը (658–712 թթ.) շիա մահմեդականների չորրորդ իմամն է, որը գրել է իսլամական իրավագիտությանը վերաբերող «Իրավունքների գիրքը» աշխատությունը:

⁶¹ Հիսուն իրավունք ըստ Ալի Էբն Հուսեյնի, 2014, 57:

խատության համապատասխան բաժիններում⁶²: Մասնավորապես «եկեղեցիների, տաճարների ու խաչերի մասին» բաժնում նշվում է, որ նվաճվող այլադավան բնակչության պաշտամունքային վայրերը չեն քանդվել, որովհետև «մահմեդականների ու զիմմիների միջև կնքվել է հաշտության պայմանագիր ջիզյա վճարելու պայմանով և քաղաքները նվաճվեցին այն պարտավորությամբ, որ նրանց տաճարներն ու եկեղեցիները թե՛ քաղաքի ներսում, թե՛ նրանից դուրս չպետք է քանդվեն, որ նրանց կյանքը երաշխավորվում է նրանով, որ մահմեդականները նրանց համար կռվելու են ու թշնամիներից պաշտպանելու: Այս բոլորի դիմաց զիմմիները պետք է մահմեդականներին ջիզյա վճարեն: Այս պայմաններով հաշտության դաշնագիր է կնքվել և գրվել պայմանագիր՝ պարտավորվելով նոր տաճարներ ու եկեղեցիներ չկառուցել»⁶³: Հետագայում որոշ խալիֆաներ ցանկացել են քանդել քրիստոնեական տաճարները: Այն ժամանակ բնակիչները ցույց են տվել այդ պայմանագրերը, որով խաղաղություն է կնքվել մահմեդականների ու նրանց միջև: Ինչ վերաբերում է նոր կառուցված տաճարներին ու եկեղեցիներին, ապա դրանք պետք է քանդվեին⁶⁴:

Դաշնագրերից յուրաքանչյուրը, կախված նրա վերարտադրման ժամանակաշրջանից ու գործածության համար նախատեսված կոնկրետ աշխարհագրական միջավայրից, ունի իր առանձնահատկությունները: Պատահական չէ, որ Իրանում, որտեղ ԺՁ դարից ի վեր պետական կրոնն էր շիա իսլամը, շրջանառվող դաշնագրերի գերակշիռ մասը կամ տրված են Իմամ Ալիի անունից կամ հաստատված նրա կամ մեկ այլ շիա իմամի կողմից (տե՛ս վերը): Ինչպես վերը նշեցինք, որոշ տվյալների համաձայն Իմամ Ալիի անունից տրված դաշնագրերի հնագույն օրինակը պահվում էր Սպահանի Չեհելսոթուն պալատում, որը կառուցվել է Սեֆյան շահ Աբբաս Բ-ի (1632–1666 թթ.) կողմից: Ուստի կարելի է ենթադրել, որ Սեֆյան պետության մայրաքաղաքում գտնվող շահական պալատում պահվող հիշյալ փաստաթուղթը բավականին մեծ կարևորություն է ունեցել իրանահպատակ հայության կյանքում: Սեֆյան պետության ժամանակաշրջանում (1694 թ.) ընդօրինակված մի վավերագրի լուսանցքում, նրան էլ ավելի մեծ ուժ հաղորդելու նպատակով նշվում է, որ պատճենի համապատասխանությունը բնագրին հաստատված է շեյխ Սեֆիի՝ Սեֆյան թագավորական տան հիմնադրի կողմից⁶⁵:

Վերը քննված դաշնագրերում Աստծո անունից և Մուհամմադ մարգարեի ու Իմամ Ալիի հաստատմամբ ամրագրվում էին բոլոր այն հիմնական իրա-

⁶² Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 99–107:

⁶³ Նույն տեղում, 111:

⁶⁴ Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, 2005, 116:

⁶⁵ Մատենադարան, արաբերեն ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 357:

վունքներն ու ազատությունները, որ ունեին իրանական տիրապետության տակ ապրող հայերը:

Դաշնագրերում նշվող դրույթներից են այն, որ «զիմմիների վրա դրված ջիզայի չափից ավելին չպահանջեն...», նրանց դեմ թշնամություն չանեն..., բռնի հավատափոխ չանեն և նրանց չարգելեն ճգնավորի կյանքով ապրել..., տեղից-տեղ շրջել..., եկեղեցական զանգերը հնչեցնել..., չքանդեն նրանց տներն ու պաշտամունքի վայրերը..., ոչ մի բան չմտնի նրանց տներից մզկիթների շինությունները և ոչ էլ մուսուլմանների տները..., անգամ եթե զիմմիները օգնության կարիք ունենան, մահմեդականները պետք է այն անհատույց տրամադրեն»⁶⁶, «քրիստոնյա կանանց հետ բռնի չպետք է ամուսնանան, և վերջիններիս կամավոր ամուսնության դեպքում՝ նրանց մահմեդականություն չպարտադրեն»⁶⁷:

Դաշնագրում հանդիպող ձևակերպումները «ջիզյա վճարող զիմմիների» իրավունքների մասին հանդիպում են նաև իրանահպատակ հայերի տարբեր խնդիրների կապակցությամբ մահմեդական աստվածաբանների ու իրավագետների (ուլամաներ ու ֆակիհներ) և մահմեդական հոգևորականների գերագույն ատյանի (դիվան ալ-սադարաթ) կայացրած վճիռներում և հրամանագրերում (ֆաթվա և միսալ), որոնք գերակշռում են հատկապես XVII դարի երկրորդ կեսին: Դա այն շրջանն էր, երբ Սեֆյան պետության թուլացմանը զուգահեռ ուժեղանում էր կրոնական իշխանությունը և ազդեցիկ հոգևորականների, հատկապես մոլլաբաշի Մուհամմադ Բադեր Մաջլեսիի դերը երկրի կյանքում: Վերջինիս մոլեռանդության պատճառով չնայած այն բանին, որ վերոհիշյալ շահերը աչքի չէին ընկնում իրենց կրոնական անհանդուրժողականությամբ, նրանց իշխանության տարիներին ուժեղանում են հալածանքները այլադավան փոքրամասնությունների, այդ թվում նաև քրիստոնյա հայերի նկատմամբ⁶⁸: Այնուամենայնիվ հայ հոգևոր առաջնորդներին հաջողվում է ազատել հայությանը կրոնական հալածանքներից և իրականացնել լայնածավալ եկեղեցական շինարարություն Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում, որ սկսվել էր ԺԷ դարի կեսերից⁶⁹:

Դաշնագրերում շարադրված դրույթներն առկա են մահմեդական հոգևորականների գերագույն ատյանի կողմից հայությանը վերաբերող մի շարք խնդիրների (հայ զիմմիների, ինչպես նաև Հայոց Եկեղեցու սեփականատիրա-

⁶⁶ عهدنامه محمد پیغمبر، ص 14.

⁶⁷ Մատենադարան, արաբերեն ձեռագրերի ֆոնդ, ձեռ. 358:

⁶⁸ تاریخ ایران: دوره صفویان، (پژوهش از دانشگاه کمبریج)، ص. 125.

⁶⁹ Բազմաթիվ եկեղեցիների վերանորոգման մասին է խոսում Առաքել Դավրիժեցին (Առաքել Դավրիժեցի, 1988, 273–278):

կան իրավունքները մահմեդականների ոտնձգություններից պաշտպանելու⁷⁰, հայկական եկեղեցական արարողություններ կատարելու, եկեղեցու զանգերը հնչեցնելու⁷¹, վնասված եկեղեցիները նորոգելու և նորերը կառուցելու⁷², հայկական եկեղեցիների բարձր ու ընդարձակ լինելու պատճառով հայերին չնեղելու⁷³, Իրանի տարբեր շրջաններում շրջող հայ վաճառականներից ջիզյա չպահանջելու ու նրանց հանդեպ բռնի գործողությունները արգելելու⁷⁴) կապակցությամբ կայացրած դրական որոշումներում և դրանց հիման վրա հրապարակված հրամանագրերում: Իրանի հոգևորականության բարձրագույն աստիճանի կայացրած վճիռները արգելում էին նաև տարբեր շրջաններում բնակվող հայ զիմմիներից իրենց իրավունքներին համապատասխան վարվելու համար հավելյալ գումարներ պահանջելն ու խոչընդոտելը⁷⁵, նրանց նկատմամբ բռնի ու անօրինական գործողությունները⁷⁶, որն անշուշտ խոսում է վերոհիշյալ դաշնագրերի գործուն դերի ու նշանակության մասին: Վերը թվարկված կրոնական ազատությունները փաստորեն արտացոլված են նաև դաշնագրերում և մի շարք կետերում, ինչպիսիք են նոր եկեղեցիների կառուցման, եկեղեցական զանգերը հնչեցնելու հնարավորությունը Սեֆյան ժամանակաշրջանում, գերազանցում էին Աբու Յուսուֆի «Հարկամատյանում» նշվող իրավունքները:

Հայ պատմիչները գրի են առել մի շարք դեպքեր, որոնցում երևում է այս դաշնագրերի խաղացած դրական դերը մասնավորապես Օսմանյան սուլթանի կողմից հայերի համար կայացրած վճիռներում⁷⁷:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ Մուհամմադ մարգարեի ու նրան հաջորդած խալիֆաների անունից կնքված դաշնագրերը միակ իրավական հիմքը չէին, որ կանխորոշում էին իրանահպատակ հայության դրությունը տարբեր ժամանակաշրջաններում: Հայերի մեծ բռնազաղթը Իրան իրականացնող Աբբաս Ա-ի կողմից 1629 թ., իր մահից քիչ առաջ, հրապարակվում է մի հրամա-

⁷⁰ Մատենադարանում պահվող պարսկերեն հրովարտականների մեծամասնությունը հրապարակված են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու հայոց վանքերի ունեցվածքի պաշտպանության նպատակով և արգելում են կոնկրետ անձանց ոտնձգությունները դրանց նկատմամբ: Բայց կան նաև վավերագրեր, որոնցով տեսականորեն ապահովվում են զիմմի իրավունքները իրեն պատկանող սեփականությունը տնօրինելու հարցում (Տե՛ս **Կոստիկյան Ք.**, պրակ III, 2005, վավ. 4, 7):

⁷¹ Նույն տեղում, վավերագրեր 31, 34:

⁷² Նույն տեղում, վավերագրեր 19, 20, 29, 32, 33, 35 և այլն:

⁷³ Նույն տեղում, վավերագիր 11:

⁷⁴ Նույն տեղում, վավերագրեր 21, 35:

⁷⁵ Նույն տեղում, վավերագիր 28:

⁷⁶ Նույն տեղում, վավերագրեր 31, 37:

⁷⁷ **Գրիգոր Դարանաղցի**, 1915, 133, 211:

նագիր, որը շրջանառության մեջ է դնում շիա իրավագիտության ձևավորման ակունքներում կանգնած իմամ Ջա'ֆարի օրենքը⁷⁸։ Ըստ այդ օրենքի յուրաքանչյուր զիմմի, որ մահմեդականություն էր ընդունում, առաջնային իրավունք էր ստանում ժառանգելու իր մեռած այլադավան ազգականների ունեցվածքը։ Այս օրենքի կիրառությունը բացահայտ կերպով խրախուսում էր այլադավանների մահմեդականացումը, որը լայն թափ է ստանում Իրան տեղափոխված հայության շրջանում։ Ժամանակակից արևմտյան աղբյուրների վկայությամբ ԺԷ դարի կեսին Սպահանի արվարձաններում բնակվող շուրջ 50000 քրիստոնյաներ, հիմնականում վրացիներ ու հայեր, մահմեդականություն են ընդունում⁷⁹։ Իմամ Ջա'ֆարի օրենքի կապակցությամբ բազմաթիվ բողոքագրեր ու փաստաթղթեր կան պահպանված⁸⁰, որոնց քննությունը ցույց է տալիս, որ այդ օրենքի հիման վրա անգամ ազգակցական կապ չունեցող անձիք փորձել են տեր դառնալ մեռած քրիստոնյաների ունեցվածքին⁸¹ և Հայոց Եկեղեցու վակֆային կալվածքներին⁸²։

Մի այդպիսի դեպք է նկարագրում Հ. Տեր-Հովհանյանը, որ տեղի է ունեցել ԺԹ դարի կեսերին։ Ըստ նրա Նոր Ջուղայեցի պարոն Մնացականի մահից հետո վերջինիս ունեցվածքը ժառանգում է նրա հեռավոր ազգական ոմն Դուլաբի Խաթուն, որը մահմեդականացել էր, հակառակ այն հանգամանքին, որ տեղի մահմեդական հոգևոր առաջնորդին հայ հոգևորականների միջնորդությամբ ներկայացվել էր «զթուղթն՝ զորմէ ասեն ձեռագիր զոլ Մահմեդի, որոյ նիւթ է չնեղել զՀայս այլ ամենայնիւ պատուել զնոսա...»⁸³։

Ավելորդ է ասել, թե ինչպիսի չարիք էր Իմամ Ջա'ֆարի օրենքի կիրառությունը հայության համար, նամանավանդ, որ, երբեմն, ինչպես վերը նկարագրված օրինակում, այդ օրենքն ավելի առաջնային էր դիտվում, քան վերը քննված դաշնագրերը, որոնցում հաստատվում էր քրիստոնյաների կյանքի ու գույքի անձեռնմխելիությունը։ Հայոց Եկեղեցու նվիրյալ առաջնորդները մշտապես ջանացել են դադարեցնել Իմամ Ջա'ֆարի օրենքի կիրառությունը կամ մեղմել նրա կործանարար հետևանքները իրանահպատակ հայության

⁷⁸ Այս հրամանագրի հրապարակման մասին տեղեկություններ կան Կարմելյան տարեգրության մեջ (**Ghougassian V. S.**, 1995, 102, հղում՝ *Chronicle of the Carmelites*, vol. I, 288).

⁷⁹ **Ghougassian V. S.**, 1995, 102–3.

⁸⁰ **Փափազյան Հ.**, 1956, № 3, 87–88:

⁸¹ **Կոստիկյան Բ.**, պրակ III, 18:

⁸² Նույն տեղում, 51:

⁸³ **Տէր-Յովհաննէանց Յ.**, հ. Ա, 1880, 453:

կյանքում⁸⁴։ Եվ այդ հարցում առանձնակի կարևորություն էին ստանում վերը ներկայացված դաշնագրերը։

Այստեղից էլ գալիս է դաշնագրերի նկատմամբ դարեր շարունակ չթուլացող հետաքրքրությունը, որի մասին է փաստում այն իրողությունը, որ 1909 թ. (հիշրայի 1327 թ.) այդ փաստաթղթի արաբերեն տարբերակը՝ տողատակում պարսկերեն թարգմանությամբ վիմատիպ եղանակով հրատարակվել է Թեհրանում Միրզա Ալի Ասղարի տպարանում։ Ըստ տպագիր օրինակի վերջաբանի՝ այն տպագրվել է Իրանում սահմանադրական շարժման առաջնորդ և ներքին գործերի նախարար Սարդար Աս'ադ Ալի Ղուլի Բախթիարիի հրամանով, Քաշանի բժիշկ Ադա Միրզա Ալի Ռեզայի հոգածությամբ և Մուսթովֆի Մուհամմադ Նաջմաբադիի ձեռքով գրված օրինակից⁸⁵։ Կարծում ենք, որ այս հարցում պետք է, որ կարևոր դեր խաղացած լինի հայերի ակտիվ մասնակցությունը Իրանում սահմանադրական հեղափոխությանը և նրա հայազգի առաջնորդ Եփրեմ խանը, որը 1909 թ. նշանակվել էր Թեհրանի ոստիկանապետ։

Հիշյալ դաշնագրի տպագրությունը առավել տրամաբանական է թվում Իրանում 1905–1911 թթ. տեղի ունեցող Սահմանադրական շարժման և հեղափոխության համատեքստում, որին ակտիվորեն մասնակցում էին Իրանի կրոնական փոքրամասնությունները՝ ջանալով բարելավել իրենց դրությունը։ Սահմանադրական հեղափոխության արդյունքում կրոնական փոքրամասնությունների իրավունքները ամրագրվում են նրա Սահմանադրության մեջ։ Եթե նախկինում Իրանում կրոնական փոքրամասնությունների դրությունը և նրանց նկատմամբ իշխանությունների վերաբերմունքը հիմնականում կախված էր տիրակալի անձնական վերաբերմունքից, նրա վարած քաղաքականությունից, արտաքին մի շարք գործոններից և կրոնական իշխանությունների ազդեցության աստիճանից, ապա Սահմանադրական հեղափոխությունից հետո այդ իրավունքները օրենքի ուժ են ստանում։

Իրանի առաջին սահմանադրությամբ կրոնական փոքրամասնությունները իրավունք են ստանում ունենալու իրենց ներկայացուցիչը Իրանի խորհրդարանում (մաջլես)։ Բոլոր իրանցիները, ներառյալ նաև կրոնական փոքրամասնությունները օրենքի առաջ հավասար են ճանաչվում, հարկային պարտավորությունների հարցում ևս որևէ արտոնություններ ու տարբերություններ չկային։

Պատմական աղբյուրների համաձայն դեռ 1881/2 թ. Ղաջար շահ Նասրադդինի հրամանով ջիզայի գանձումը զրադաշտականներից դադարեցվել

⁸⁴ Կոստիկյան Ք., պրակ IV, 2008, 14–15։

⁸⁵ عهدنامه محمد پیغمبر، ص. 19.

էր: Սահմանադրական հեղափոխությունից հետո ջիզյան այլևս չէր գանձվում նաև քրիստոնյաներից ու հրեաներից⁸⁶:

Իրանի կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք ուներ նաև Իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնին: Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակից մի քանի ամիս առաջ լրագրողների հետ ունեցած հարցազրույցում կրոնական փոքրամասնությունների մասին խոսելիս նա նշում էր, որ իսլամական պետությունը իրական իմաստով դեմոկրատական պետություն է, որտեղ կրոնական փոքրամասնություններն ունեն լիակատար ազատություն իրենց կրոնական ու տնտեսական օրենքներին հետևելու հարցում, և իսլամական կառավարությունը պարտադիր է համարում նրանց իրավունքների ու ապահովության պաշտպանությունը: Հեղափոխության առաջնորդն իր խոստումներն այս հարցում պահեց հեղափոխությունից հետո⁸⁷: 1979 թ. Իրանում Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո Իրանի սահմանադրության մեջ ճանաչվում են չորս կրոնական փոքրամասնություններ. զեյդի շիաներ, սուննիներ, զրադաշտականներ, քրիստոնյաներ ու հուդայականներ: Նրանք ազատ են համարվում իրենց կրոնական օրենքներին հետևելու և դրանց համապատասխան վարվելու հարցում⁸⁸: Կրոնական փոքրամասնություններից յուրաքանչյուրն, ինչպես և նախկինում, իրավունք ուներ ունենալու իր ներկայացուցիչը Իրանի պառլամենտում: Քաղաքացիական իրավունքի մի շարք կետերում կրոնական փոքրամասնությունների իրավունքները հավասարվում են մահմեդականների իրավունքներին և հետևաբար էլ ավելի մեծացնում կրոնական փոքրամասնությունների իրավասություններն ու ազատությունները Իրանում⁸⁹:

Կարևորագույն փոփոխությունները քաղաքացիական օրենքներում Իսլամական հեղափոխությունից հետո վերաբերում էին ժառանգական խնդրին և վկայություններին. այսինքն արդյոք այլադավան լինելը արգելք էր հանդիսանում ժառանգության և վկայություն տալու հարցերում:

⁸⁶ حقوق اقلیتهای دینی در قوانین ایران (منابع دانشنامه جهان اسلام، بنیاد دائره المعارف اسلامی برگرفته از مقاله شماره 6348. «حقوق اقلیتهای دینی در قوانین ایران»، شماره 6348. <http://www.rwgn.net/index.aspx?siteid=1&pageid=287>)

⁸⁷ نظر امام خمینی در باره حقوق و جایگاه اقلیت های دینی از آغاز انقلاب اسلامی (<http://www.imam-khomeini.ir/fa/n25386/>):

⁸⁸ حقوق اقلیتهای دینی در قوانین ایران (منابع دانشنامه جهان اسلام، بنیاد دائره المعارف اسلامی برگرفته از مقاله شماره 6348. «حقوق اقلیتهای دینی در قوانین ایران»، شماره 6348. <http://www.rwgn.net/index.aspx?siteid=1&pageid=287>)

⁸⁹ Նույն տեղում:

Մահմեդական իրավագետների կարծիքով անհավատությունը խոչընդոտ էր ժառանգության հարցում, որը թույլ էր տալիս մահմեդական ժառանգի առկայության դեպքում անհավատ ազգականներին գրկել ժառանգությունից: Այս օրենքի հիմքում, ինչպես տեսնում ենք, Իմամ Ջա'ֆարի օրենքն էր: Այն հնարավորություն էր տալիս շահամոլ անձանց կեղծ մահմեդականություն ընդունել և դառնալ իրենց այլադավան ազգականների ունեցվածքի միակ ժառանգորդը: Իրանի արտգործնախարարության արխիվում կան որոշ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ 1901–1946 թթ. որոշ տեղական կառավարիչներ համաձայնության գալով հոգևորականների հետ միջամտել են այլադավանների խռովություններին և փորձել տեղի դառնալ նրանց ունեցվածքին⁹⁰: 1983 թ. փոփոխված օրենսդրության մեջ ավելացվում է հետևյալ կետը, ըստ որի մահմեդական ժառանգի առկայության դեպքում այլադավան մյուս ազգականները գրկվում էին ժառանգությունից: Այնուամենայնիվ 1994թ. այդ կետի գործադրումը կասեցվում է և դատարաններում պարտադրվում է մահացած այլադավանի ունեցվածքի բաժանումը կատարել արդարացի կերպով և ըստ համայնքի ներսում գործող օրենքների⁹¹: Սա նշանակում է, որ ներկայումս կասեցված է Իմամ Ջա'ֆարի օրենքի սկզբունքներով առաջնորդվելը այլադավանների ժառանգության խնդիրներում:

Մեր ժամանակներում, երբ Իրանը թեոկրատիկ պետություն է և մահմեդական հոգևորականությունը իր ձեռքում է պահում երկրի իշխանության լծակները, հողվածում քննվող դաշնագրերը նորից վերստացել են իրենց քաղաքական նշանակությունը: Իրանում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վարվող ներքին քաղաքականության հիմքում շարունակում են մնալ հանդուրժողականության սկզբունքները՝ ձևավորված հիշյալ դաշնագրերի ու դրանց համապատասխան հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնիի արտահայտած տեսակետի վրա: Դաշնագրերի իրավա-քաղաքական կարևորությունը շեշտել է նաև Իրանի իսլամի քարոզչության կենտրոնի տնօրեն, իսլամի իրավագիտության դոկտոր Մեհդի Մահդի Խամուշին, որը 2013 թ. մայիսին Երևանի Մատենադարան էր այցելել և անձամբ ծանոթացել նրանց բովանդակությանը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մահմեդական տիրապետության ներքո թե՛ հայ Առաքելական և թե՛ քրիստոնեական մյուս դավանանքների առաջնորդների ձեռքում եղած տարալեզու դաշնագրերը ունեն բովանդակային և ձևակերպումների ընդհանրություններ, որոնք խոսում են նրանց միևնույն երկու տարբեր արարերեն սկզբնաղբյուրներից ծագած լինելու մասին: Այդ

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Նույն տեղում:

դաշնագրերը ստեղծվել են Թ-ԺԹ դարերում պատմական հենքի վրա՝ որոշակի չափով պահպանելով իրենց սկզբնաղբյուրներում առկա պատմական իրողությունների հետքը և հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին: Այդ դաշնագրերը դարեր շարունակ եղել են այն հենարանը, որի վրա խարսխվել է ոչ մահմեդական ժողովուրդների կացությունը մահմեդականների տիրապետության պայմաններում: Հիշյալ փաստաթղթերն էլ ավելի կարևորվել են մահմեդականների կրոնական մոլեռանդության պոռթկումների և անհանդուրժողականության աճի շրջաններում: Հարմարեցվելով ժամանակի ու միջավայրի պահանջներին՝ հիշյալ փաստաթղթերը այլադավան ժողովուրդների հոգևոր առաջնորդների կողմից օգտագործվել են համայնքի դրությունը բարելավելու և մահմեդականների հետ հարաբերություններում ծագած խնդիրները կարգավորելու նպատակով: Այդ փաստաթղթերը իրենց քաղաքական կարևորությունը չեն կորցրել նաև մեր օրերում և որոշակի դեր կարող են խաղալ նաև ներկայումս մահմեդական աշխարհում հանդես եկող կրոնական անհանդուրժողականության երևույթները մեղմելու համար:

Ստորև թարգմանաբար ներկայացնում ենք 1909 թ. Իրանում վիմատիպ եղանակով հրատարակված դաշնագրի արաբերեն բնագիրը հայերեն թարգմանությամբ.

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

هذا كتاب العهد المكتوب بدير خرقيـل ذي الكفل عليه السلام نحمد الله تعالى وعلى عبده ان ناسا من علماء النصارى واهل التقوة والمودة منهم وكان منهم العاقب و سيد عديـشوع وابن حجن و ابراهيم الراهيب عيسى الاسقف وكان منهم اربعين نفسا من اكابر النصارى ممن رغبوا في رعاية عهدي والمعرفة بحقي والحفظ لما فارقوني عليه والاعانة لمن كان من رسلنا في اطراف الثغور فاستوجبوا بذلك امانتي ومودتي ووفائي لما عاهدتم عليه واعطيتهم من نفسي على جميع اهل الاسلام من شرق الارض وغربها انهم في ذمتي ما دمت حيا بعد وفاتي اذا امانني الله ما ثبت دين الاسلام وما ظهرت دعوة الايمان لازم ذلك من عهدي و ميثاقي جميع ولالة السلاطين وغيرهم من المسلمين وما بل بحر صوفة وما جائت السماء بقطرة والارض بنبات وما اضاءت نجوم الليل تبين الصبح للسائرين ليس لاحد نقضه وتبديله ولا الزيادة فيه ولا الانتقاص منه لان الزيادة فيه تفسد عهدي والنقصان منه ينقض اياي لان تبديله يلزمني العذر على ما اعطيت على نفسي ومن خالفني من اهل ملتي فقد نكث عهد الله تقـدس اسمه واطل عن ميثاقه وصارت عليه حجة الله تعالى وكفى بالله شهيدا وان السيد والاسقف والمذكورين واكابر النصارى التمسوا كتابنا ليكون عهدا وميثاقا لجميع النصارى القاطنين تحت ظل الاسلام وفيه امانة وكفاية بينهم وبين المسلمين عهدا لهم ابدًا ووفاء مني بما عاهدتم عليه واعطيتهم من طيبة نفسي فاحببت بذلك ان اتم الصنيعة في الذمة من كانت حاله حال استقامة فيما بيني وبينهم وكف الاذية عني وعن اهل مذهبي فان اجعل ذلك شرطا وعهدا مرعيا وامانا معروفا يمثل المسلمون ويأخذ به المؤمنون واحضرت ذلك رؤساء المسلمين وافضل اصحابي ووكـدت على نفسي العهد الذي طلبوا وارادوا وكتبت لهم شرطا يكون عند اعقابهم فاذا نكث احد العهد ليظهروه عند المسلمين من كان منهم سلطانا او غير سلطان وان على السلطان انفاذ ما امرت ليستكمل موافقة الوفاء والتحلي الى عهدي والجمات الذمة والشرط الذي اعطيت من نفسي لئلا تكون الحجة عليه مخالفة امري و على المسلمين واجب ان لا ياذنهم و ان يكملوا لهم العهد الذي جعلته لهم ليدخلوا في باب الوفاء ليكونوا لي عوانا على الخير الذي

տի նրանց այս կամքին համապատասխան էլ իմ բարեկամությունն է [նրանց հանդեպ] և հավատարմությունը այն ամենին, որ ուխտեցի նրանց հետ ու շնորհեցի նրանց անձամբ բոլոր մահմեդականների անունից և՛ արևելքում և՛ արևմուտքում: Այս պատճառով, որ նրանք իմ հովանու տակ են քանի դեռ ես կենդանի եմ և իմ մահից հետո, երբ Ալլահն իր ողորմածությանը կարժանացնի, այնքան ժամանակ քանի դեռ իսլամը կանգուն ու հայտնի կլինի, իսկ նրա [ընդունման] հրավերը՝ անհրաժեշտ, իմ ուխտը [պարտադիր է] բոլոր մահմեդական կառավարիչների համար, լինեն նրանք թագավոր կամ այլ: Քանի դեռ ծովի ջուրը կլթջի բուրդը, երկնքից անձրև կգա, հողից բույս կաճի, իսկ գիշերը կլուսավորեն աստղերը և կրացվի առավոտը ճամփորդների համար, ոչ ոք չի կարող այն խզել, փոխել, նրանում ավելացում կատարել կամ պակասեցնել նրանից որևէ բան, որովհետև նրա մեջ հավելումը կեղծիք է, իսկ պակասեցումը՝ խախտում է իմ [կողմից տրված ապահովությունը]⁹⁴: Եթե նրա փոփոխումը անհրաժեշտ է [համարում որևէ մեկը], ապա պարտավորեցնում է արդարացում գտնել նրա համար: Ով որ իմ համայնքից ինձ կհակառակվի, խախտած կլինի Աստծո ուխտն ու երդումը, թող սուրբ լինի նրա անունը և փոփոխած կլինի Բարձրյալ Աստծո փաստաթուղթը: Բավական է Աստծո անվան վկայակոչումը, որ վերոհիշյալ սեփդը, եպիսկոպոսը և մյուս անձիք ու քրիստոնյա⁹⁵ մեծամեծները խնդրեցին մեր գրությունը, որը ուխտ և դաշնագիր է բոլոր քրիստոնյաների համար, որոնք հանգիստ են գտել իսլամի ներքո, ապահովություն լինի ու երաշխավորի նրանց ու մահմեդականների միջև մշտնջենական համաձայնությունը: Իմ հավատարմությունը այն պայմաններին, որ կնքեցի նրանց հետ և շնորհեցի նրանց իմ կամքով և կցանկանայի, որ կատարյալ լինի նրանց հանդեպ բարերարությամբ, ովքեր հովանավորության տակ են, և այդ հարցում շիտակություն կա իմ ու նրանց միջև, [որը] հեռու կպահի ինձ և իմ հավատի մարդկանց վնասից:

Ես հաստատեցի այն որպես պարտադիր գործադրության ենթակա պայմանագիր և հանրահայտ ապահովագիր, որին պետք է հետևեն մահմեդականներն ու բարեպաշտները: Եվ ներկայացրեցի մահմեդական առաջնորդներին ու իմ իմաստուն հետևորդներին՝ պարտադրելով այն դաշնագիրը, որ խնդրել ու ցանկացել էին [քրիստոնյա մեծամեծները]: Եվ գրեցի նրանց համար դաշնագիրը, որը մշտապես կմնա նրանց հետևորդների մոտ: Եթե որևէ մեկն խախտի ուխտը, ապա թող այն ցույց տան մահմեդականներին, ով էլ որ նա լինի. թագավոր կամ ոչ թագավոր: Իսկապես, իշխողը պարտավոր է գործադրել այն, ինչ հրամայել եմ, որպեսզի նրանց համաձայնությամբ լիակա-

⁹⁴ Վերականգնված է ըստ տողատակում պարսկերեն թարգմանության:

⁹⁵ Պարսկերեն տարբերակում՝ հայեր:

տար լինի իմ պայմանագրին հավատարմությունը, և քաղցրությամբ պահպանեն այն, որը զիմմիների համար ապաստան դարձրեցի և շնորհեցի նրանց անձամբ, որպեսզի փաստարկ չլինի նրա համար, ով կհակառակվի իմ հրամանին: Մահմեդականները պարտավոր են նրանց [զիմմիներին] չնեղել և կատարյալ դարձնել իմ ուխտը, հավատարիմ լինեն նրան և աջակից բարի գործերում, որոնցով նրանց կպարգևատրեն: Եվ ով որ պարտադիր կհամարի հավատարմությունը, նա օգնած [կլինի իսլամի] քարոզչությանը, և անհաշտ կլինի խորամանկ ու նենգամիտ մարդկանց հանդեպ, որպեսզի քրիստոնյաներից ոչ ոք փաստարկ չունենա որևէ մահմեդականի դեմ, ով հակադրվում է այն ամենին, ինչ նկարագրեցի այս գրության մեջ: Նրանք պարտավոր են պահպանել այն հավատարմությունը, որին արժանի են [զիմմիները]: Այդ հավատարմությունն է հանգեցնում կատարելության և ազնիվ վարքի, պարտադրում բարի գործեր և ետ պահում չարիքից: Նրանում է ճշմարտությունը և իրավունքի պահպանումը, եթե Բարձրյալ Ալլահը կամենա:

Սկսեցի ուխտի և ինձանից ու իմ մահմեդական հետևորդներից խնդրված պայմանների շարադրանքը այն կապակցությամբ, որ շնորհեմ նրանց [զիմմիներին] Ալլահի ուխտն ու պայմանագիրը, իմ, մյուս մարգարեների, ընտրյալների, բարեպաշտների և մահմեդականների՝ առաջինից մինչև վերջինի, հովանավորությունը: Եվ վկայում եմ, որ իմ ուխտն ավելի ամուր է, քան այն, ինչ Աստված պահանջում է մարգարեից ու իր հրեշտակից որպես հպատակություն: Եվ քանի որ նրանք իմ հպատակներն են ու իմ հովանավորության տակ են գտնվում՝ բացած լինելով իրենց առաջ երջանկությունը, ուստի [ուխտին] հավատարմությունը ու նրա պայմանների գործադրումը պարտադիր է, և որ հովանավորեմ ու պաշտպանեմ ամեն չարիքից, որպեսզի նրանց վնաս չհասնի, որը նույնն է ինչ ինձ ու իմ ընկերներին հասցված վնասը և պաշտպանում է իսլամի մաքրությունը: Եվ ևս հեռու կպահեմ նրանց [մթերք] մատակարարելու նեղությունից, որ կրում է ուխտի ժողովուրդը իսլամի գորքի կողմից, բացի նրանից, որ նշեցի այս պայմանում:

Արգելվում է նշված որևէ հարցում բռնությունն ու զգվանքը [քրիստոնյաների նկատմամբ], [զրկելն ու փոփոխելը] եպիսկոպոսին իր եպիսկոպոսությունից, վանականին վանականությունից, քրիստոնյային քրիստոնեությունից և ճգնավորին իր մեկուսարանից, ճանապարհորդին ճանապարհորդությունից: Թող չավերեն նրանց տները, պաշտամունքի վայրերն ու վանքերը, չտանեն որևէ բան նրանց տներից մզկիթները և մահմեդականների կացարանները, թող որևէ հարց չհետաձգեն, նաև եկեղեցական զանգերը [չարգելեն]:

Համաձայնվեցին Հակոբը (Ակոբ), Սեիդը, Աբդ Յաշու'ն, իբն Հաջանան, Աբրահամ (Իբրահիմ) վանականը, Եսայի (Իսա) եպիսկոպոսը, որ ջիզյան յու-

րաքանչյուր քրիստոնյայից 33 դիրհեմ 1/3 դիրհեմ⁹⁶ արծաթի չափով հաստատվի նրանց վրա որպես մաղթա՝: Այս պայմանը, դաշնագիրն ու հրապարակված փաստաթուղթը ով որ ընդունի, նա իսլամին համապատասխան, ժողովրդի օգտին ու նրան արժանի վարված կլինի: Ով որ կոչնչացնի այս դաշնագիրը, որ ես գրեցի և կփոխի այն ուրիշ բանով, նրան հակառակ կվարվի, դրժած կլինի Աստծո ուխտն ու նրա պայմանագիրը, նվաստացրած կլինի նրա հավատը ու արժանի կլինի նրա անեծքին, լինի նա թագավոր կամ այլ ոք բարեպաշտներից ու մահմեդականներից: Թույլ չպետք է տան, որ քրիստոնյաներից որևէ մեկը իր կամքին հակառակ իսլամ ընդունի, չպետք է կռվեն նրանց դեմ, այլ լավ վարվեն նրանց հետ և ողորմաճաբար, որտեղ էլ, լինի:

Եթե նրանք դրամի կարիք զգան իրենց վանքերի ու մենաստանների նորոգման ու բարելավման համար, ապա թող մահմեդականների նվիրատվությամբ և նրանց օգնությամբ [կատարեն], և դա չպետք է համարվի պարտք նրանց վրա, այլ նեցուկ կանգնի նրանց, բարելավի նրանց վիճակը, ամրացնի նրանց ապահովությունն ու հավատարմությունը ուխտին, որպես անհատույց շնորհ՝ արված նրանց Աստծո և նրա մարգարեի կողմից: Ով որ փոխի այս պայմանը, անարդար և Աստծո մարգարեին դեմ դուրս եկած [կհամարվի]: Այս պայմաններով արդարադատների առաջնորդ Ալի իբն Աբի Տալիբի և նրանց հետ կնքված ուխտը ամբողջացնելուց և նրա հանդեպ հավատարիմ լինելուց բացի այլ ճանապարհ չկա: Նրանք պարտավոր են կատարել պայմանագրով նախատեսվածը, և մահմեդականները պարտավոր են հաշվի առնել, պահպանել այն ու լիովին գործադրել այն մշտապես, մինչև Ահեղ Դատաստանի օրը: Գրեց այս Հիշամ իբն Ութբա իբն Ուսկասը բարեպաշտների ամիր Ալի իբն Աբի Տալիբի ներկայությամբ: Սույն գրությունը գրվեց Օրինյալի հովանու ներքո Խարկիլ վանքում հիջրայի 40 թվականի սաֆար ամսին: Փառք Բարձրյալ Աստծուն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ghougassian V. S., – 1995, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, Columbia University, 1995.

Ghougassian V. S., – 1995, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, Columbia University, 1995, հղում՝ Chronicle of the Carmelites, vol. I, p. 288.

Histoire Nestorienne (Chronique de Seert), Patrologia Orientalis, vol. 13, Paris, 1918.

⁹⁶ Ամենայն հավանականությամբ նախ դիրհեմ բառն օգտագործված է դրամի իմաստով, ապա՝ կշռի:

Ludwig Paul, Persian language i. Early New Persian. Historical background. Encyclopaedia Iranica, online edition <http://www.iranicaonline.org/articles/persian-language-1-early-new-persian> (accessed on December 21, 2015).

Seta B. Dadoyan, – 2011, The Armenians in the Medieval Islamic World. Paradigms of Interaction seventh to Fourteenth Centuries, v. I, Transaction Publishers New Brunswick (U.S.A.) and London (U.K.), 2011, p. 57.

Առաքել Դավրիժեցի, – 1988, Պատմություն, Երևան, 1988:

Արաբ մատենագիրներ Թ–Ժ դարեր, Երևան, 2005:

Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ Մատենագիրներ Թ–Ժ դարեր, Ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005:

Բարզեն Եսա. Կիլիսեան, Իսլամը հայ մատենագրության մեջ Վիեննա, 1930, էջ 122:

Գրիգոր Դարանաղի, – 1915, Ժամանակագրություն, Երուսաղեմ, 1915:

Կոստիկյան Բ., – 2005, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ, պրակ III, Երևան, 2005, վավերագրեր 4, 7:

Կոստիկյան Բ., – 2008, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. Հրովարտակներ, պրակ IV, Երևան, 2008

Հիսուն իրավունք ըստ Ալի Էբն Հոսեյնի, Երևան, 2014:

Ղևոնդ, – 1982, Պատմություն, Երևան, 1982:

Մակարյան Վ., Ալի իբն Աբու Թալիբի՝ քրիստոնյաներին տրված երաշխավորագիրը, -Լևոն Խաչիկյան, 90, Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսուներեսյակին նվիրված միջազգային գիտաժողովի, 2010:

Մինասյան Լ.Գ., – Երկու հրովարտակ Մահամմադ մարգարեից և Ալի ամիրապետից, Սպահան 1363 (1985), էջ 1-2:

Մկրտումյան Գ., – 2007, Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյա համայնքին տրված պայմանագիրը, Արաբագիտական ուսումնասիրություններ, Բ, Երևան, 2007:

Մկրտումյան Գ., – 2010, Երուսաղեմի նվաճումը Օմար իբն ալ-Խատաբ խալիֆայի օրոք և Երուսաղեմի հայկական համայնքին տրված արաբական արտոնագիրը, Արաբագիտական ուսումնասիրություններ, Գ. Հոդվածների ժողովածու, Երևան, 2010:

Մկրտումյան Գ., – 2013, «Ալի Մանշուրը» որպես քրիստոնյա համայնքների իրավունքներն ամրագրող պայմանագիր մուսուլմանական տիրապետության օրոք, -Արաբագիտական ուսումնասիրություններ, հ. 6, Երևան, 2013, էջ 97–103:

Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979:

Սամուել Անեցի, – 2011, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երևան, «Նաիրի», 2011:

Սաւալանեանց Տ., – 1931, Պատմութիւն Երուսաղեմի, հ. Ա., Երուսաղեմ, տպ. Սրբոյ Յակոբեանց, 1931:

Տեր-Յովհաննեանց Յ., – 1880, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Զուղա, 1880:

Փափազյան Հ., – 1956, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, հ. Ա, Երևան, 1956, վավ. 21:

Փափազյան Հ., – 1956, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան 1956, № 3, էջ 87–88:

تاریخ ایران: دوره صفویان، (پژوهش از دانشگاه کمبریج)، تهران، 1384
حقوق اقلیتهای دینی در قوانین ایران (منابع دانشنامه جهان اسلام، بنیاد دائرة المعارف اسلامی برگرفته از مقاله
«حقوق اقلیتهای دینی در قوانین ایران»، شماره 6348.

(<http://www.rwgn.net/index.aspx?siteid=1&pageid=287>)

عهدنامه محمد پیغمبر، تهران، 1327
نامه ها و پیمانه های سیاسی حضرت محمد و اسناد صدر اسلام، تحقیق و گردآورده دکتر سید محمد حسینی، تهران، 1377
نظر امام خمینی در باره حقوق و جایگاه اقلیت های دینی از آغاز انقلاب اسلامی
(<http://www.imam-khomeini.ir/fa/n25386/>):

КРИСТИНЕ КОСТИКЯН

*Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ*

kkostikyan@yahoo.com

ГАЯНЕ МКРТУМЯН

Кафедра арабистики ЕГУ

ДОГОВОРЫ ЗАКЛЮЧЕННЫЕ ОТ ИМЕНИ ПРОРОКА МУХАММЕДА И ХАЛИФА АЛИ ИБН АБУ ТАЛИБА С АРМЯНАМИ КАК ИСТОРИЧЕСКИЕ ДОКУМЕНТЫ

РЕЗЮМЕ

На протяжении долгих веков договоры заключенные от имени пророка Мухаммеда и четырех правоверных Халифов с покоренными народами не принявшими ислам, в том числе и с армянским народом, играли важную роль в защите их прав. Они тщательно хранились, переписывались и передавались из поколения в поколение изменяясь в соответствии с новыми условиями и обстоятельствами. Эти договоры легли в основу исламского права отразившись в трудах основоположников исламской юриспруденции.

В данной статье проводится источниковедческий анализ этих документов, сохранившихся в поздних (XI–XIX вв.) копиях на арабском, персидском и армянском языках. В результате анализа выявлено, что все эти документы являются поздними обработками двух арабских компиляций имевших историческую основу и циркулировавших среди армян и других христиан живущих во власти мусульман. Примечательно, что вышеназванные обработки отличаются друг от друга в зависимости от места и времени их создания, так как были созданы для защиты прав христиан в определенной стране и при определенном политическом режиме. Так, копии созданные в Иране, кроме имени пророка Мухаммеда обязательно содержат подтверждение от имени главы шиитов Имама Али, или Имама Джафара, одного из основоположников исламского права шиитского толка. В копии созданной в период Сефевидской власти есть также запись о его утверждении Шейхом Сефи, основоположником правящей шахской династии.

В копиях циркулировавших среди армян указываются все основные (религиозно-политические и социально-экономические) права народа, живу-

щего во власти мусульман. Но кроме этих документов еще один фактор имел решающее значение в положении армян живущих под иранской властью. Закон имама Джа'фара введенный Шахом Аббасом Первым о первоочередном праве христиан, принявших ислам, наследовать все имущество свои умерших родственников (как близких, так и дальних), имел тяжелые и пагубные последствия для всего армянского народа живущего на территории иранского государства, ведя к обнищанию и способствуя их ассимиляции.

В таких условиях вышеназванные документы, в которых утверждались неприкосновенность зиммиев (христиан, платящих налог за веру – джизью) и их имущества, становились основным аргументом в борьбе против посягательств как алчных родственников, принявших мусульманство, так и других претендентов на имущество христиан.

Положения этих документов лежат в основе многих указов, выданных шахами на имя католиков и религиозных деятелей, в защиту их прав и по поводу разных проблем, возникающих в жизни армян, живущих под их властью.

Договоры заключенные от имени пророка Мухаммеда и Имама Али не потеряли свою актуальность и политическое значение и в нынешнее время. Хотя более ста лет как налог за веру (джизья) в Иране отменен, многие пункты этих документов лежат в основе правового состояния немусульманских меньшинств Ирана и терпимости со стороны религиозных властей этого государства.

KRISTINE KOSTIKYAN

PhD in History

Institute of Oriental Studies, NAS RA

kkostikyan@yahoo.com

GAYANE MKRTUMYAN

Chair of Arabic Studies of YSU

PACTS SIGNED WITH ARMENIANS ON BEHALF OF PROPHET MUHAMMAD AND THE CALIPH ALI IBN ABI TALIB AS THE HISTORICAL DOCUMENTS

SUMMARY

For long ages the treaties concluded on behalf of the Prophet Muhammad and the Four Faithful Caliphs with the subjugated people who did not adopt Islam (the Armenian people in this range) played an important role in the defence of the latters' rights. These documents were carefully kept, copied and handed from generation to generation, bearing changes according to the new conditions and circumstances. They were put in the basis of Islamic law and reflected in the works of the founders of Islamic jurisprudence.

A detailed analysis of the late (11th–19th Centuries') copies survived in Arabic, Persian and Armenian languages carried out in the article shows that all of them are variants of two Arabic documents, composed on historical basis and circulating among Armenian population as well as other Christian communities living under Muslim rule. These variants, depending on the place and the time of their composition differ from one another. Thus, the copies composed in Iran apart from the name of the Prophet Muhammad, contain also confirmations by Caliph Ali, the religious leader of Shiites, or Imam Ja'far, one of the founders of Shiite Islamic law. A copy composed in Safavid age contains also a record stating about its confirmation by Shaikh Safi, the founder of Safavid dynasty.

The copies circulating among Armenians contain all main issues due to their social-economic and religious-political rights under Muslim rule. But there was another factor having an influence upon the state of the Armenians under Iran's rule. According to the Imam Ja'far's law established during the rule of Shah Abbas I, a Zimmi who adopted Islam and became a Jadid al-Islam, had the right to inherit the whole property of his non-Muslim (close or distant) relatives. This law had

fatal consequences on the state of Armenians subject to Iran resulting in their mass conversion to Islam and impoverishment.

In such circumstances these documents stating about the personal immunity and the inviolability of the properties of the zimmi (Christians, Zoroastrians, etc. who were paying jizya, the poll-tax for faith) were the main arguments against the encroachments of the New Muslim relatives and other claimants to the properties of the Christians.

Many of the items of these documents are in the basis and contents of the royal decrees and resolutions (fatvas and misals) issued by the religious high instances like divan al-sadarat or the council of 'ulama and fuqaha on account of various problems referring to the rights of the Armenians in Safavid Iran.

The treaties ascribed to Prophet Muhammad and Imam Ali have not lost their political significance up to now. Although over a century ago the jizya was abrogated, the contents of these treaties is in the basis of the state of non-Muslim minorities in Iran and the tolerance of its religious leaders.